

Հուրելի փոթորիկ մը փրթաւ քիչ մը վարերն գէպ 'ի ծովեզերք, Մեկնայի գետաբերանաց վրայ և 35000 Հին. տուք ջրասոյդ եղան: Բաժին 1867, կալկաթայի շրջակայքը 30000 տնակը կործանեցան, բայց բարեբաղդաբար մեռեալներուն թիւն հազարը չէր անցած:

Իմաստասիրին մշտնջենաւոր զար-

մացման նիւթ մ'է այն անհողու թիւնն, որով նորանոր բնակիչներ կու գան ջրասոյդ եղողներուն տեղը բռնելու և անխոնջ աշխատութեամբ մը շակելու այս բազմաբեղուն և միանգամայն փոանգաւոր հողը, մինչև այն օրն, որ իրենք ալ իրենց հօրց նման ջրասոյդ ըլլան մռմռեալ Ովկիանու ալեաց մէջ:



ՈՐՈՑ ԲԱՐԵԿԱՄ

Իռլանտիոյ արևմտեան անբեր գաւառաց մէկուն պղտի գիւղի մը մէջ աղքատ այրի կին մը կ'ապրէր, որուն էրկանէն մնացած միակ ժառանգութիւնն երկու քաջառողջ գասերը էին, որոնց մէկն երեք տարուան էր, միւսն հինգ տարուան: Մեծաւ տառապանք և յետին աստիճանի ճգամբը յաջողեցաւ անցընել իւր գառնայի այրութեան առաջին երկու տարիներն: Իր փափուկ կազմուածքին համեմատ ծանր աշխատութեամբ վաստրկած գէշ և հասարակ ապրուստը, վերջապէս ղինքն հիւանդանկողին ձգեց, և մահը խղճալով վրան ազատեց ղինքը քիչ օրուան մէջ, առանց մեծ ցաւոց, երկրաւոր տանջանքներէն: Ամբողջ գաւառին աղքատութիւնն այնչափ մեծ էր, որ այն խեղճ որբերուն բնաւ բան մը չկրցաւ բնելու:

« Գոնէ տղաքը կարենային Գիւպըռն երթալ » — քանի մը միլն հեռու գեղ մը՝ զրացինքնէն մէկն ըսաւ, խեղճ մօրը թաղմանէն ետքն, « այն տեղ իրենց հօրեղբայր մը կը բնակի, և անկարելի է որ ժխտէ անոնց խնամք տանելու »:

Դէպ 'ի Գիւպըռնի կողմերը գնացող կառավար մը, իբրև Գործք ողորմութեան, առաւ հետն այն երկու աղջիկ-

ներն, Եղիսաբէթը եօթը տարուան և Մարիամն հինգ, իր կառքին մէջ, Կէսօրուան գէժ հասան այն տեղն, ուրպէս կառքը ճամբան պիտի փոխէր: Մարտը վար դրաւ դանոնք կառքէն, ճամբան յրցուց և պատուիրեց որ միշտ շխտակ առաջ երթան:

« Անօթի եմ, ըսաւ մեղմով Մարիամ. ամբողջ օրը բան մը կ'երած չենք »: Եւ երկուքը մէկէն սկսան աղաղակել. վասն զի Եղիսաբէթ ալ նոյն պէս անօթի էր:

Եւ իրաւցունէն այն տղաքն ուժէ բնկած էին, և հագիւ թէ կրնային իրենք ղիրենք քաշըռտելով կամաց կամաց առաջ երթալ: Չեաք ձեռքի տուած դանդաջելով կ'երթային, վերջապէս Եղիսաբէթ տուն մը տեսաւ: Վարանալ քայլերով անոր բակը մտան. մինչև այն ատենն երբէք չէին մուրացած, թէ և առաջ ալ խեղճութեան մէջ ըլլային. բայց հիմայ ստիպուեցան ուրիշ բան չմտածել, բայց եթէ իրենց սոսկայի անօթութիւնը, Տղաքը զարհուրած ոտքի վրայ սպասեցին զրանն առջև մինչև որ բարկացած ձայն մը գագեցաւ: Այն ատեն Եղիսաբէթ բացաւ գուռը և երկուքը մէկտեղ ներս մը-

տան : Տանտէրը թիկնաթոռի մը վրայ կրակին դիմացը նստած էր :

« Լաւ, ինչ բանի պէտք ունիք » : հարցուց տմարդութեամբ սողոց, որոնք զարհուրած չէին կրնար բառ մ'արտասանել և իրենց այցելութեան պատճառը յայտնել : « Խօսիլ գիտէք », հարցուց ալ տեղի խտուր : Վերջապէս Եղիսաբէթ սիրտ բռաւ, և ըսաւ անուշութեամբ : « Ո՛հ, ինչ մեծ բարիք ըրած կ'ըլլայիք քիչ մը ուտելիք տայիք, կտոր մը հօնք, կամ թէ քանի մը գետնախնձոր » :

« Ես ալ այն կը մտածէի », աղաղակեց տանտէրը : « Անշուշտ մուրացկան էք դուք, թէ և ինչպէս կը տեսնուի այս կողմերէն չըլլաք : Ձեզի նման այս տեղ շատ կայ, և ուրիշ կողմերէն եկողներու պէտք չունինք : Մինչև անգամ մեզի համար հաց չունինք այսպիսի նեղութեան ժամանակ : Այս տեղ բան մը չունիք վաստակելու : Եռուս գնացէք ասկէ » :

Երկուքն ալ սաստիկ վախացած սկսան դառնապէս աղաղակել :

« Ամբողջ օրը պատառ մը բերաննիս չենք դրած », կրկնեց Եղիսաբէթ :

« Անշուշտ հոգնած ենք, որ քայլ մը ընելու կարողութիւն չունինք : Ենթոհէք ըրէք տուէք մեզի պզտի պատառ մըն ալ ըլլայ, շատ անօթի ենք » :

« Մէյմը ըսի, ձեզի պէտք չունիմ : Մուրացկաններն այս տեղ բան չեն գտներ » :

Տանտէրն ոտք ելաւ սպառնալից նալուածքով : Եղիսաբէթ շտապաւ դուռ բացաւ և իր քոյրը միատեղ դուռն վազեցին : Նորէն կեցան տանը բակը, և չէին գիտեր ինչ ընելին : Յանկարծ պզտի Մարիամ քաշեց ձեռքը քրոջ աչքէն և բակին մէկալ կողմը գնաց, ուր չղթայական պատառի շուն մը կար, որուն կերակուրը փայտեայ ամանի մը մէջ դիմացը կեցած էր : Մարիամ երկընցուց ձեռքը ամանին մէջ և սկսաւ շանը հետ ուտել : Եղիսաբէթ ալ մօտեցաւ և տեսաւ որ ամանին մէջ քիչ մը հնգուկ կար, հացի ալ կատրուա՞րք և

քանի մը խաչած գետանխնձոր : Ինքն ալ նոյնպէս չկրցաւ դիմանալ, և ուրիշ բան չմտածեց բայց եթէ անօթութիւնը, ուստի առաւ այն հացէն և գետնախնձորէն քիչիկ մը և անյագաբար կերաւ :

Շունն, որ այսպիսի սեղանակիցնէրու վարժած չէր, այն սողայոց նայելով ետ քաշուեցաւ, և վար նստաւ ու թողուց անոնց իր կերակուրը, որ ինքը քիչ մը կերած էր : Նոյն ժամանակ տանտէրը բակն ելաւ, ուզեց տեսնել թէ արգելք այն սողաքն իրաւցընէ գնացեր էին : Բայց իբր այս տարօրինակ տեսարանը տեսաւ՝ զարմացաւ միտք : Շունն իր կատաղութեանը համար նշանաւոր էր, մեծ ու պզտիկ ամենքը անկէ կը վախնային : Անոր համար հարկ էր միշտ չղթայական պահել զինքը, և մարդ չէր համարձակեր քովը մօտենալու, բայց ի տիրոջմէն : Նոյն իսկ ծառան ամենայն զգուշութեամբ կերակուրը դիմացը կը դնէր : Տէրը մէկէն ուրիշ բան չմտածեց, բայց եթէ այն երկիւղալի վտանգն, որուն մէջ կը թրտնուէին այն սողաքն, և շուն մը դէպ ի անոնց վազելով աղաղակեց :

« Շունը չէք տեսնար, կտոր կտոր կ'ընէ զձեզ » : Բայց յանկարծ կանկ կ'առնուաւ արձան կտրած : Շունը ոտք կ'ելլէ և սողայոց քովը կը մօտենայ, յետոյ տիրոջն երեսը կը նայի և պոյր կը շարժէ : Կարծես թէ կ'ուզէր ըսել :

« Սեղանակիցներս թող կենան » :

Այս տեսնելով մեծ աղլաղութիւն մ'ենկաւ մարդուն վրայ : Իր առջևի տեսարանը իր ելքերտրական հարուած մը ազդեց վրան, և մինչև այն ատեն չունեցած զգացմունքն սկսան զինքը յուզել :

Տղաքն ոտք ելան, մարդուն ձայնէն սարսափեցան, և վախցան որ չըլլայ թէ պատիժ մ'առնուն շանը կերակուրն ուտելուն համար, անոր համար աչուընին դետին նայելով գնացին : Վերջապէս քանի մը վայրկեան լուսութենէն ետքը, տան տէրն ըսաւ :

« Իրաւցունէ այսպէս սոսկալի կեր-

պով անօթի էք, որ մինչև անգամ չան կերակուրն ուտելու չխորշեցաք : Ներս եկէք, որ ձեզի ուտելու բան տամ, և ուղածնուգ չափ կերէք » : Եւ ձեռքերնէն բռնած տուն տարաւ, ծառան կանչեց ու, « Պետրոս, ըսաւ, չուտ այս տղայոց թամայ հաց և կաթ բեր » : Եւ նա ամբիցուց իր տէրը. անասունն ամբիցուց զմարդ : Սեղան նստեցուց տղաքը, ինքն ալ միատեղ հետերնին նստաւ, և անուշութեամբ հարցուց անոնց անունը, որոնք չուտ մ'ըսին :

« Անուն գիտէք, տղաք » :

« Ոչ », պատասխանեց եղիսարէթ :

« Ուրեմն ինչպէս դէպքը բերաւ որ ինծի եկաք » :

« Արդեօք մէկը զձեզ ինծի գրկեց » :

« Ոչ դք գրկեց զմեզ », կրկնեց եղիսարէթ : « Մենք Քիլպրուն պիտի երթայինք, ուր կը բնակի մեր հօրեղբայրներէն մէկը, և կ'ըսէին թէ սիրով կ'ընդունի զմեզ : — Բայց ես այս բանիս հաւատք չ'ընծայեցի, վասն զի մայրերնիս միշտ կ'ըսէր թէ անիկայ խստասիրտ մարդ մ'է, որ իրեն ազգականացն հոգ չտանիր » :

« Մայրերնիդ ամեն իրաւունք ունէր երբոր այսպէս կ'ըսէր », կրկնեց տանտէրը : « Բայց ինչ պիտի ընէիք եթէ այն խստասիրտ մարդը ընդունելու չըլլար զձեզ » :

« Այն ատեն անօթութենէ պիտի մեռնէինք » պատասխանեց եղիսարէթ :

« Ոչ, ոչ, ազգակեց մէկէն մարդը, երբէք այսպիսի բան պիտի չպատահէր. ոչ երբէք : Սրբեցէք արցունքնիդ : Ամենողորմածն Աստուած գթաց ձեր թըշուառութեանը վրայ, և կատաղի կենդանւոյ մը օրինակաւ մեղմացուց ձեր հօրեղբոր սիրտը, որ ասկէ ետքը ալ երեսի վրայ չի թողուր զձեզ. ոչ երբէք » : Տղաքը վերջին աստիճանի երկմտութեամբ մարդուն երեսը նայեցան. ըսածը չէին հասկընար : — Անոր խօսքերը և անոր կերպարանքն ալ նոյնպէս տարօրինակ էին իրենց համար : Ինքն ալ մէկէն անդրադարձաւ, ու չուտով վրայ բերաւ : « Դուք Քիլպրուն պիտի գայիք Պատրիկ Սուլիվանին քով, արդէն իսկ անոր տունն էք : Ես եմ ձեր հօրեղբայրը, և հիմայ կ'իմանամ որ դուք Մարտինոս եղբորս տղաքն էք, բարի եկաք » :

Տղայոց արտասուները շուտ մը խընտուռի փոխուեցաւ, և ուտելիքն որ Պետրոս նոյն ատեն սեղանին վրայ դրաւ, ցաւերնին մոռցնել տուին : Բարերար նախախնամութիւն մը տղայոց քայլերը ուղղած էր. սակայն թէ որ շունն իր տիրոջը գթութեան դաս մը տուած չըլլար, ով գիտէ թէ ինչ կըընար հանդիպիլ այն խեղճ որբերուն :

